

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՋ ԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ՊՈՍԹՈՆԻ

----- 0 -----

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՒ, ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀ ՈՒՐԴԻ
Ե Ի

ԵՆԹԱՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ

1969 ՏԱՐՈՒԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ ՀԱԻԱՔԱԾՈՑ

* * * * *

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH of GREATER BOSTON

145 Brattle Street

Cambridge, Massachusetts 02138

----- 0 -----

1969 REPORTS

of the

PARISH PRIEST

PARISH COUNCIL

and

SUBORDINATE BODIES

HOLY TRINITY ARMENIAN CHURCH OF GREATER BOSTON

Table of Content


Pastor's Report	
Parish Council Report	
Church Mortgage Fund Report	
Parish Council Financial Report	
Sinking Fund Report	
Church Choir Report	
Trinity Men's Union Report	(No Report)
Senior Women's Auxiliary Report	
Young Women's Auxiliary Report	
Chelsea Women's Auxiliary Report	
Holy Trinity Armenian School Report	
Holy Trinity Sunday School Report	
Armenian Church Youth Organization Report	(No Report)
Arlington Women's Educational Society	
Lynn, Salem, & Peabody Women's Auxiliary Report	(No Report)

ՄԵՏԱԳՈՑՆ ՊՈՍԹՈՆԻ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՏԻՈՑ

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՒ

1969 ՏԱՐՈՒԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ



1969 տարին ալ Աստուծոյ ողորմութեամբ ողջամբ եւ առողջութեամբ մեր ետին թողուցինք: Յետսահայեաց ակնարկով մը կը նշմարենք թէ յաջողութեան եւ յառաջդիմութեան տարի մը եղաւ ան ալ: Այսպէս ուրեմն մեր եկեղեցին տարուէ տարի կը բարգաւաճի շնորհիւ տարուած անձնդիր աշխատանքի եւ անշահախնդիր առաջնորդութեան: Հետագայ տողերը կը ներկայացնեն տարուան մը անդուլ աշխատանքի ամփոփումը:—

1. ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ.— Անխափան ամէն կիրակի ունեցանք պաշտամունք. առաւօտեան ժամերգութիւն եւ Ս. Պատարագ: Բարոգեցիներ Բանին Կենաց եւ ազգային շունչով, միշտ շեշտելով հոգեկանը, բարոյականը եւ հայկականը: Աշնան սկսանք ամիսը մէկ անգամ եկեղեցւոյ մէջ եւս անգլերէն լեզուով քարոզել Կիրակնօրեայ դպրոցի աշակերտութեան համար: Մեր հոգեւոր եղբայրը Հոգւ. Տ. Չական Վրդ. Մինասեան, ըստ նախորդին, շարունակեց քարոզել ամիսը մէկ անգամ հայերէն եւ անգլերէն լեզուներով, որպէս զի մենք առիթ ունենանք նոյն պահուն Կիրակնօրեայ դպրոց երթալ եւ հոն քարոզել:

2. ՄԿՐՏՈՒԹԻՒՆՔ.— Տարուան ընթացքին մկրտուողներու թիւը եղած է 44, որ նախորդ տարիէն երկու պակաս է: Կը խնդրենք յարգելի ծնողներէն որ չուշացնեն իրենց նորածիններուն մկրտութիւնը: Գիտենք թէ տակաւին բազմաթիւ փոքրիկներ կան որոնք քալել սկսած են եւ չեն մկրտուած: Մըկըրտութիւնը քրիստոնէական կեանքի առաջին եւ ամենէն կարեւոր աչգակն է: Հայ փոքրիկը անշնորհք պէտք է մնայ:

3. ՊՍԱԿԱԴՐՈՒԹԻՒՆՔ.— Այս տարի ունեցած ենք 16 պսակադրութիւններ, որ նախորդ տարիէն եօթը պակաս է: Եւ այս 16 ամուսնութիւններէն 11ը եղած է օտարի հետ: Առանց վանելու կամ քննադատելու օտարը պէտք է ըսել թէ ասիկա առողջ երեւոյթ մը չէ մեր գաղութին համար: Ասիկա պատկերն է նաեւ այսօրուան ամերիկահայութեան: Մեր համայնքէն տակաւին բազում երիտասարդներ եւ երիտասարդուհիներ ամուսնացած են օտար եկեղեցիներու մէջ կամ պարզապէս քաղաքային պսակով: Եկեղեցիէն առաջ ծնողաց պարտականութիւնն է յորդորել եւ առաջնորդել իրենց զաւակները որ հայու հետ ամուսնանան եւ Հայ Եկեղեցւոյ մէջ պսակուին: Այս պարագան իրականացնելու համար ամէն ստուղ իր զաւակները կիրակնօրեայ եւ հայերէնի դպրոցները պէտք է բերէ որ հայեցի ուսում ստանան:

4. ՄԱՀԱԴՐՈՒԹԻՒՆՔ.— Այս տարի մեռնողներու թիւը պակասած է: Ունեցանք 58 թաղումներ անցեալ տարուան 64ի դէմ: Բոլորին դամբանական խօսած ենք միլիթարելու համար ընտանիքի վերապրող անդամները, ինչպէս նաեւ այցելութիւններով ալ ջանացած ենք ամոքել իրենց կեանքը:

5. ԴԻՒԱՆԱԿԱՆՔ.— Մեր դիւանական աշխատանքները տարուէ տարի կ'աւելնան, որովհետեւ եկեղեցւոյ գործունէութիւնը հետզհետէ կը ծաւալի: Մեր ժամանակին մէկ որոշ մասը կը գրաւէ մեր գրասեղանը պատասխանելու համար այլազան պահանջներու: Մեր հեռախօսը չէր բաւեր եղած յարաբերութիւններուն, այդ իսկ պատճառաւ տարուան վերջաւորութեան մէկի տեղ հեռախօսի երկու թիւ ունեցանք:

6. ՄԻԱԿԱՆ ԽՈՐՀ ՈՒՐԴ. — Կանոնաւոր կերպով նախագահեցինք Պատուարժան Միական Խորհուրդի ժողովներուն: Մեր յարաբերութիւնը Խորհուրդին հետ եղաւ սիրալիւր եւ համագործակցական: Միշտ յարգեցինք Խորհուրդը եւ փոխադարձաբար յարգուեցանք: Խոստովանինք թէ Միական Խորհուրդը Պ. Արչի Խոլլիկեանի առողջ առեւտրապետութեամբ ոգի ի բռին աշխատեցաւ եկեղեցւոյ պայծառութեան եւ յառաջդիմութեան համար: Ժողովներէն դուրս շատ անգամներ իրենց գործերը ձգելով եկան եւ աշխատեցան եկեղեցիին համար: Միական Խորհուրդին անդամներուն մեծագոյն մասը հոս ծնած ըլլալով հանդերձ սերտօրէն կապուած են Հայաստանեայց եկեղեցիին եւ կը գուրգուրան անոր հայեցի նկարագրին վրայ:

7. ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ. — Մինչեւ աշուն, ըստ առաջնոյն, քարտուղարութեան պաշտօնը կէսօրուան ժամանակամիջոցով վարեց Տիկ. Կրէյս Յակոբեան: Աշնան լման ժամանակով քարտուղարուհի ունեցանք Տիկ. Վարդուհի Մէմիշեանը: Իսկ Տիկ. Յակոբեան շաբաթը երկու լման օր կը յատկացնէ եկեղեցւոյ հաշուակալութեան գործին: Երկուքն ալ իրենց պաշտօններուն գիտակից անձեր ըլլալով նախանձախնդիր են իրենց գործերուն: Երկուքն ալ դրասենեակի մեր գլխաւոր աշակիցներն են եւ մեր հսկողութեան տակ կը կատարեն անգլերէն լեզուով ըլլալիք բոլոր գործերը: Ուրախ ենք յայտնելու թէ երկուքն ալ ուր են է թերացում չեն ունեցած իրենց պարտականութեանց մէջ:

8. ԼՈՒՍԱՐԱՐ. — Մեր ամէնօրեայ անմիջական շփուժը մեր քարտուղարուհիներէն զատ մեր լուսարար Պետրոս Աւագ Սարկաւազ Առաքելեանն է, որ մեր ցուցմունքներուն համաձայն իր պարտականութիւնները թէ եկեղեցւոյ եւ թէ ծխատան մէջ խղճի մտօք կը կատարէ: Ան վարձկան պաշտօնեայի դերին մէջ չէ, այլ տանտիրոջ եւ վստահելի է: Մեզի կ'օժանդակէ նաեւ Ս. Պատարագի, պսակներու, մկրտութեանց եւ թաղման արարողութեանց ատեն դիւրացնելով մեր գործը: Բծախնդիր է եկեղեցւոյ մաքրութեան:

9. ՍԱՐԿԱՒԱԳԱՏ ԴԱՍ. — Կ'ուզենք շեշտել թէ այս երկրին մէջ ամենէն զօրաւոր սարկաւազաց դասը մերն է: Մեր նախասարկաւազ Լեւոն Թէրզեանը իր եկեղեցական հմտութեամբ բոլորը իր ետին կը թողու: Վահէ Թաշեան սարկաւազը իր կանոնաւոր յաճախանքին մէջ անմրցելի է: Երկուքն ալ հեռու վայրերէ կու գան եկեղեցի: Տիրան Տինճեան սարկաւազը երգեցողութիւնը առաւել կը ճոխացնէ: Երկու տարիէ ի վեր ունեցանք նաեւ ներսէն Փափազեան սարկաւազը որ համեստօրէն կը ծառայէ: Պետրոս Առաքելեան սարկաւազը կը կատարէ լուսարարի վերաբերեալ բոլոր պարտականութիւնները: Գաղթեցին Պետրոսեան եւ Սուրէն Մեծօրեան կիսասարկաւազները Ս. Պատարագի ընթացքին կը կատարեն բոլոր պարտականութիւնները ի բաց առեալ Վերաբերումէն եւ Աւետարանի ընթերցումէն: Ասոնց ծառայութեանց շնորհիւ կը վեհանայ Ս. Սեղանի սպասարկութիւնը: Առաջնորդ Սրբազան Հօր յաջորդ այցելութեան կը սպասենք որպէս զի երկու երիտասարդներ կիսասարկաւազ ձեռնադրել տանք Ս. Սեղանի սպասարկութեան համար: Իսկ մոմակալութեան պաշտօնին կարգով կը վարժուին Կիրակնօրեայ դպրոցի փոքրիկները:

10. ԴՊՐԱՑ ԴԱՍ. — Հոգ. Տ. Օշական Տ. Օշական Վրդ. Մինասեանի վարժու ճկուն ղեկավարութեամբ մեր դպրաց դասը կը կատարէ իր պարտականութիւնը գեղեցիկ երգեցողութեամբ: Հետզհետէ դասի անդամները աւելի կանոնաւորութեամբ կու գան եկեղեցի: Սկսած է արդէն նոր ուժեր մտնել դասէն ներս: Դպրաց Դասի վարչութիւնն ալ Պ. Նորայր Օտապաշեանի առեւտրապետութեամբ կազմակերպչական եւ ընկերային գործեր կը կատարէ: Տարուան վերջաւորութեան արդէն որոշուած եւ ձեռնարկուած է կրտսեղաց դպրաց դասի մը կազմութեան: Իսկ Հայր Օշական Դպրաց Դասէն զատ կազմակերպած է 'Երեւան' երգչախումբը, որպէս դասէն բխած մարմին, իր տարեկան համերգով պատիւ կը բերէ մեր եկեղեցիին եւ կը նպաստուորէ դասին գանձը: Բաց աստի ան օգտակար կ'ըլլայ համայնքիս զանազան հրապարակային հաւաքոյթներուն այս երգչախումբով: Ձանացած ենք միշտ քաջալերել Հայր Օշականը որպէս զի տարածէ Հայ երգը մեր համայնքին մէջ, եւ ի մասնաւորի մեր երիտասարդ սերունդին հոգիին մէջ:

11. Այս տարի չորս հիւր եկեղեցականներ պատարագեցին եւ քարոզեցին Ս. Եկեղեցւոյս մէջ: Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. Թաղոյեան Թեմական Պատգամաւորական ժողովի առիթով քաղաքս գտնուելով Մայիս 4ին պատարագեց եւ քարոզեց: Մայիս 18ին ժընելէն քաղաքս հիւրաբար այցելող Հոգշ. Տ. Օշին Վրդ. Նիկողեան պատարագեց եւ քարոզեց: Հոկտեմբեր 5ին եւ 12ին մեր Հայաստան գտնուած շրջանին պատարագեց եւ քարոզեց Արժ. Տ. Վրթանէս Ա. Քհ. Փափագեան: Տ. Վրթանէս Հայր Նոյեմբեր 2ին ալ պատարագեց եւ քարոզեց Լինի մէջ մեզ փոխարինելով: Որպէս նորութիւն Նոյեմբեր 23ին հովիւի եւ դպրաց դասի փոխանակութիւն ըրինք Ուստրի Ս. Փրկիչ եկեղեցւոյ հետ: Նոյն օրը Ս. Եկեղեցւոյս մէջ պատարագեց եւ քարոզեց Հոգշ. Տ. Սիւռոն Ս. Վրդ. Կրճիկեան:

12. ԵՆԹԱՄԱՐՄԻՆՆԵՐ. — Միշտ յարաբերութեան մէջ եղած ենք մեր եկեղեցւոյ ենթամարմիններուն հետ եւ նախագահած անոնց ժողովներուն եթէ այլ պարտականութեամբ դուրսը գտնուած չենք: Յաճախ առիթ ունեցած ենք խօսելու անոնց հոգեւոր եւ բարոյական նիւթերու շուրջ եւ դիւրացուցած՝ դիւանական գործերը, ամէն անգամ որ պէտք ունեցած են մեր աշակցութեան: Մեր ենթամարմինները լաւ կազմակերպուած միութիւններ են, որոնք իրենց ընթացքը յաջողապէս կը շարունակեն: Սակայն, ինչպէս ամբողջ Ամերիկայի երիտասարդութիւնը յեղաշրջման շրջան մը կ'անցընէ, նոյն վիճակին ենթարկուեցաւ նաեւ մեր երիտասարդաց կազմակերպութիւնը: Ուրախ ենք յայտնելու թէ մերինները աւելի շրջահայեաց քայլեր առին ու մեր եւ Միական Խորհուրդիս հսկողութեան եւ առաջնորդութեան ներքեւ վերակազմակերպուեցան: Կարելի է ըսել թէ յուսալից ապահայ կը խոստանան եթէ ներկայ վիճակի մէջ մնան եւ շարունակեն նոյն ընթացքը, որուն համար տարակոյս չունինք: Իրենց խոստացած ենք մեզի ինկած բաժինը սիրով կատարել եկեղեցագիտական դասախօսութիւններով: Մեզմէ զատ անոնց կը հսկեն Միական Խորհուրդի երեք անդամներ, Ամերիկացի Օր. Մարկրիտ Թամսըն եւ Երիտասարդ Տիկնանց Միութենէն երեք հոգի:

13. ԱՅԼ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿԵՈՒԹԻՒՆ. — Մեր Թեմական հինգ պատգամաւորներուն հետ մասնակցած ենք Մայիսի սկիզբը Թեմական Պատգամաւորական ժողովին, որ տեղի ունեցաւ Ուոթթրթաունի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ եւ կատարած մեզի յանձնուած պարտականութիւնը: Տարուան ընթացքին մասնակցած ենք նաեւ այլ խորհրդակցական ժողովներու:

14. ԿԻՐԱԿՆՅՈՐԵԱՅ ԴՊՐՈՆ. — Կիրակնօրեայ դպրոցը մեր դուրսուրանքին առարկայ եղած է միշտ, վասն զի այն գիտակցութիւնը ունինք թէ մեր եկեղեցւոյ վստուան աղօթաւորները հոն պիտի պատրաստուին: Ամէն ամսուան չորրորդ կիրակի օրը, Ս. Պատարագի վերջաւորութեան դպրոց իջած եւ իրենց մատչելի հոգեւոր կամ բարոյական դաստիարակիչ նիւթի մը մասին խօսած ենք: Բաց աստի դպրոցի տեսչութեան հետ միշտ հաղորդակցութեան մէջ գտնուելով իրազեկ եղած ենք կատարուած գործունէութեան: Տեսուչ Տիկ. Սառա Կիւլիստեան եւ գործակիցը Տիկ. Կրէյս Գաբրիէլեան ամբողջ ուսուցչական կազմով արժանի են բոլորին գնահատութեան:

15. ՀԱՅ ԴՊՐՈՆ. — Հայ դպրոցը հայուն ազգային տունն է: Հոն է որ տղաքը պիտի հայանան հայ լեզուի ուսուցումով: Ուրախ ենք յայտնելու թէ դպրոցը դասարանի երեւոյթէն դուրս ելած է այլ եւս եւ դպրոցի երեւոյթ տուցած է խնամակալութեամբ, տեսուչով եւ ուսուցչական կազմով ու կանոնաւոր դասապահերով: Գնահատելի է ներկայ խնամակալութեան թափած ջանքերը Տիկ. Սիւրանոյշ Մարթինի գլխաւորութեամբ եւ Պ. Ռուբէն Գրէնեանի տեսչութեամբ:

16. ՏԱՃԱՐ. — 'Տաճար!' ամսաթերթիկը կանոնաւոր կերպով կը հրատարակուի տարին տասը թիւ օճսէթով: Եթէ մեր օժանդակ մարմինները քիչ մը աւելի բծախնդիր ըլլան իրենց լուրերուն եւ աւելի շուտ հասցնեն զբասնեակ, մեր գործը շատ աւելի կը դիւրանայ: Դժբախտաբար շատ ծախսալից ըլլալուն կարելի չ'իդար էջելու բազմապատկել ու շինիչ նիւթերու շուրջ գրութիւններ

եւս դնէինք: Ներկայիս կը մնայ լուկ տեղեկատու Ս. Եկեղեցւոյս գործունէութեան: Իսկ միւս կողմէ ընթերցողներուն մեծ մասին անտարբերութիւնն ալ անհասկնալի կը մնայ: Կը խորհինք թէ ամէն մարդ տարին երկու տոլար կը նայ վճարել անոր տպագրութեան եւ առաքման ծախուց համար: Այդ ձեւով կը թթեւնայ անոր բեռը:

17. ԱՅՑԵԼ ՈՒԹԻՒՆՆԵՐ.— Այցելած ենք մեր համայնքի հիւանդներու երբ լուր ունեցած ենք անոնց մասին: Երբեմն շատ ուշ լուր կ'ունենանք եւ շատ անգամներ ալ բնաւ լուր չի տրուիր մեզի: Մերինին նման ընդարձակ համայնքի մը մէջ կարելի չէ բոլոր հիւանդանոցները այցելել եւ հայ հիւանդ փնտռել: Ատիկա պարզապէս ժամանակի վատնում պիտի ըլլար: Կրկին ու կրկին կը խընդրենք մեր ծխականներէն որ երբ հիւանդ ունենան հաճին լուր տալ մեր գրասենեակը: Իսկ ծխական այցելութիւն տուած ենք մեր անգբաղ ժամանակին ներած չափովը միայն:

18. ԱՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ.— Մեր եկեղեցիէն դուրս ունեցած ենք արտաքին ծառայութիւններ եւս: Տարուան ընթացքին բազմաթիւ անգամներ Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ թաղման արարողութիւններ կատարած ենք հովիւի բացակայութեան պատճառաւ եւ շատ անգամներ ալ մասնակցած թաղման կամ պսակի արարողութեանց ընտանիքներու փափաքով: Թաղման արարողութիւններ կատարած ենք նաեւ Փրաւիտէնսի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցւոյ մէջ: Այցելութիւններ տուած եւ կարճ արարողութիւններ կատարած եւ քարոզած ենք Պոսթոնի Հայ Խնամատան մէջ:

19. ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ.— Սեպտեմբերի վերջաւորութեան բարեբախտութիւնը ունեցանք մեր կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով, երէցկնոջս ընկերակցութեամբ եւ 80 հոգինոց խումբով մը, ուխտի երթալ Ս. Եջմիածին եւ ներկայ ըլլալ Սրբալոյս Միւռոնի օրհնութեան, զոր հանդիսաւորապէս կատարեց Ազգիս Վեհափառ Հայրապետը, Ն.Ս.Օծութիւն Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս առնթրակայութեամբ 12 լիակատար զգեստաւորուած եպիսկոպոսներու եւ աւելի քան 25,000 հաւատացեալներու ներկայութեան: Մեր երթուղարձը տեւեց երեք շաբաթ: 17 օր մնացինք Երեւան: Տեսանք մեր արեւաշող ու վերածաղկող Հայրենիքը եւ մեր պատմական եկեղեցիները: Վերադարձին քանիցս առիթը ունեցանք հրապարակաւ արտայայտուելու մեր տեսածներու մասին:

20. ՇՆՈՐՀԱԿԱԼԻՁ.— Վերջացնելով մեր ամփոփ տեղեկագիրը պարտք կը զգանք հրապարակաւ մեր սրտագին շնորհակալութիւնները յայտնել Միական Խորհուրդիս պատուարժան անգամներուն՝ որոնց հետ սիրալիւր գործակցութիւն ունեցանք ամբողջ տարի մը եւ ի մասնաւորի անոր ատենապետ Պ. Արչի Խուլիկեանին՝ որուն հետ ոչ միայն տարակարծութիւն չունեցանք, այլ միշտ հաճոյքով յարաբերեցանք: Սրտագին շնորհակալութիւն մեր հոգեւոր եղբօր՝ Հայր Օշականին՝ որ իր բոլոր կարելի միջոցները ի գործ դրաւ եկեղեցական արարողութիւններուն փայլ տալու դպրաց դասով եւ Տիկ. Հելըն Մուրատեանի երգեհոնահարութեամբ: Ան մեզի օգնեց նաեւ քարոզելով: Շնորհակալութիւն Դրպրաց դասի բոլոր անդամ-անդամուհիներուն՝ որ իրենց ժամանակը տրամադրեցին եւ հոգեւոր պարտականութիւն սեպեցին եկեղեցի գալ եւ երգել: Շնորհակալութիւն մեր սարկաւազ եղբայրներուն՝ որոնց անձնուէր ծառայութիւնները ամէն զնահատանքէ վեր է: Շնորհակալութիւն մեր գոյգ քարտուղարուհիներուն՝ որոնք համարաշխ ու սիրալիւր մթնոլորտի մը մէջ մեղուաշան աշխատանք կատարեցին ու մեր եւ Միական Խորհուրդիս բազմատեսակ գործերը թթեւեցուցին: Երշնորհակալութիւն մեր լուսարար Պետրոս Սարկաւազին՝ որ եկեղեցին եւ մեր գրասենեակները միշտ մաքուր կը պահէ եւ այլազան գործեր կը կատարէ: Շնորհակալութիւն եկեղեցւոյս բոլոր կազմակերպութիւններուն՝ որոնք ամբողջ տարին հարուածային աշխատանք կատարեցին նպաստելու համար եկեղեցիին պահպանման ու բարգաւաճման: Ամենէն վերջը, բայց մեծազոյն շնորհակալութիւնը կը յայտնենք մեր բարեպաշտ ծխականներուն՝ որոնց ներկայութեան, առօրեային եւ նիւթական զոհողութեան շնորհիւ միայն կարելի եղաւ այսքան գործ կատարել եւ եկեղեցին կանգուն ու պայծառ պահել: Բոլորին ալ կ'ըսենք վարձքերնիդ կատարէ: Բող Տէրը վարձահատուց ըլլալ բոլորին:

21. Մեր եկեղեցիոց ԱՊԱԳԱՆ. - Անցնող տասը տարիներու ընթացքին բոլորս միասնաբար մեր ջանքերը կեդրոնացուցինք եկեղեցւոյ եւ յարակից շէնքերու կառուցման, դրամահաւաքութեան եւ պարտքի վճարման գործերուն վրայ: Այս տարի եկեղեցւոյ կառուցման ութերորդ տարեդարձը վերջացաւ արդէն եւ 1,200,000 տուար արժողութեամբ կալուածներուն վրայ 73,000 տուար պարտք մնաց եւ մէկ երկու տարիէն ան ալ կը վճարուի: Այնուհետեւ պիտի ձեռնարկուի եկեղեցւոյ ներկին եւ Մշակութային Սրահի արդիականացման: Ասոնք ընթացիկ գործեր են որ հետզհետէ պիտի ըլլան: Էականը սակայն նորաբոյս սերունդը եկեղեցւոյ մէջ պահելու հարցն է: Ինչպէս դիտէք մեր թեմին մէջ եկեղեցականներու պակասութիւն կայ: Կանի մը ուսանողներ կը պատրաստուին եկեղեցականութեան եւ յոյս ունինք թէ անոնցմէ մին կամ միւսը պիտի կարենանք ունենալ իրենց շրջանի աւարտին: Սակայն մինչ այդ հարկ է որ մեր ծրարականները շարժին եւ գործի լծուին այնպէս ինչպէս ըրին եկեղեցւոյ կառուցման ատեն: Նախ իրենք անտարբեր չմնան եկեղեցւոյ հանդէպ եւ կանոնաւոր կերպով եկեղեցի գան աղօթելու եւ նորոգուելու համար: Իրենց ընտանիքներուն մէջ չանդամագրուածները անդամագրեն, եւ բաց աստի ամէն անդամ առաքելական գործ կատարելով դուրսէն նոր անդամ մը ապահովէ կրկնապատկելու համար մեր անդամացանկը: Միւս կողմէ, ըստ Աստուածաշունչի, հրեայ ժողովուրդը իր եկամուտին տասանորդը կու տար Աստուծոյ գործին համար: Մենք այդ պահանջքը իր լիութեամբ չունինք մեր ծխականներէն, այլ կը խնդրենք որ ամերիկեան սովորութեամբ իրենց ղրկուած շաբաթական պահարանները զամբիւղին մէջ չնետեն, հապա իրենց սրտէն խած նուէրը շաբթէ շաբաթ մէջը դնեն եւ եկեղեցի բերեն: Պէտք է գիտնալ թէ կաթիլ կաթիլ լին կ'ըլլայ: Եկեղեցւոյ ծախսերը հետզհետէ կը բարձրանան: Ապագային ալ մեր եկեղեցին պէտք պիտի ունենայ երկու հովիւի հասնելու համար այս ընդարձակածաւալ համայնքի հոգեւոր գործերուն: Այս բոլոր մտահոգութիւնները Միական Խորհուրդին եւ մեր վրայ մի ձգէք, այլ սերտօրէն աշակցեցէք եկեղեցին նախանձելի վիճակի մէջ պահելու համար: Իսկական եկեղեցին դուք ըլլալով միշտ ներկայ եղէք եկեղեցւոյ շէնքին մէջ:

Գիտակցինք մեր եկեղեցւոյ իրական արժէքին եւ մշտնջենապէս տէրը եւ պահապանը մնանք անոր:

Վերջացնելով տարուան մը մեր տեղեկագիրը կ'աղօթենք բոլորիդ առողջ եւ տնտեսաբար մնալուն համար եւ Աստուծոմէ կը հայցենք որ բոլորդ օծէ երկնային օրհնութիւններով:

Աղօթարար

ԱՍԲԳԻՆ Ա. ԱՀՆՅ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ
Հոգեւոր Հովիւ
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՄԵԾԱԳՈՑՆ ՊՈՍԹՈՆԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՏԻՈՅ

ԾՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ 1969 ՏԱՐԵՇՐՁՁՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ



Հետեւելով մեր կանոնադրային պարտաւորութեան, հաճոյքով կը ներկայացնենք Միական Խորհուրդիս 1969 տարուան գործունէութեան մէկ ամփոփ պատկերը՝ սեղմ գծերով եւ հետեւեալ ստորաբաժանումներով։-

ԾՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՎԱՋՄԸ.- Անցեալ տարի, 1969 Յունուար 26ի Կիրակի օրուան Ընդհանուր Անդամական Ժողովին մէջ, ուր ներկայ էին 176 անդամներ, ներկայ Միական Խորհուրդի կազմը լրացուեցաւ 1 վերընտիր եւ 5 նոր անդամներով, ըստ որուն ներկայ շրջանի կազմը ունեցաւ հետեւեալ արդիւնքը՝ յետ դիւանական ընտրութեան։-

- | | |
|---------------|-------------------|
| Ատենապետ | Արչի Խոլլիկեան |
| Փոխ-Ատենապետ | Ալպըրթ Թալանեան |
| Ատենադպիր | Արամ Տէր Յակոբեան |
| Փոխ-Ատենադպիր | Արթըր Նաճարեան |
| Գանձապահ | Ուիլեմ Մարթին |
| Փոխ-Գանձապահ | Արթըր Աբգարեան |
| Անդամներ | Փիթըր Կիլիսսեան |
| | Արամ Տիրանեան |
| | Ռապըրթ Ջարդարեան |
| | Տիգ Մուրատեան |
| | Տիրան Մաղիկեան |

ԴԻԻԱՆԱԿԱՆ.- Միական Խորհուրդս կանոնադրապէս ունեցաւ իր երկշաբաթեայ նիստերը նախագահութեամբ մեր Տէր Հօր՝ Արժ. Տ. Բաբգէն Ա. Բհ. Մագսուտեանի եւ անոր ցուցմունքներով եւ օգտաշատ առաջնորդութեամբ պէտք է ըսել թէ բոլորեց բարեյաջող շրջան մը։ Միական Խորհուրդիս դիւանը նոյնպէս ղյկավարութեամբ Արժ. Տէր Հօր, լաւագոյնս յանձանցեց ամէնօրեայ դրաստենեակային գործերը։ Պէտք է միշտ ի մտի ունենալ թէ մեր եկեղեցին ունի շուրջ 1500 տուն ծխականներ եւ այս բոլորին հետ կապ պահել, անոնց պէտքերուն պատասխանել ամէնօրեայ ծանր աշխատանքներ են, որոնց ձեռնհասօրէն կը հասնի Արժ. Տէր Հայրը՝ գրասենեակի երկու քարտուղարուհիներով։

ՊԱՇՏՕՆԷՆՈՒԹԻՒՆ.- Ինչպէս ըսենք, գրասենեակը ունի երկու քարտուղարուհի, Տիկ. Կրէյս Յակոբեան եւ Տիկ. Վարդուհի Մէմիշեան։ Տիկ. Կրէյս իր տնային գործերուն պատճառաւ միայն երկու օր գրասենեակ կ'իջնէ եւ կը զբաղի հաշուական գործերով։ Տիկ. Վարդուհի Մէմիշեան անցեալ Սեպտեմբերին պաշտօնի կանչուեցաւ, փորձառու եւ ձեռնհաս Տիկին մը, որ կը վարէ գրասենեակի անհրաժեշտ բոլոր աշխատանքները՝ յարաբերական եւ թղթակցական։

Մեր միւս պաշտօնեաներն են։-

- Հոգ. Տ. Օշական Վրդ. Մինասեան, որպէս ղպրապետ։
- Տիկին Հելըն Մուրատեան՝ երգեհոնարուհի։
- Պետրոս Աւագ Սարկաւագ Առաքելեան՝ Լուսարար։
- Մշակութային Սլահի եւ յարակից շէնքերու աստամեայ հոգատար ամերիկացի երիտասարդ մը։

ՏԱՃԱՐ ԱՐԿԱԹՈՐԹԻԿ.- Լոյս տեսաւ ամէն ամիս կանոնաւորապէս մեր ծխական համայնքին տալով բոլոր եկեղեցական լուրերը եւ բարոյացուցիչ հաղորդումներ: Կը տպուի 1500 օրինակ եւ կը ղրկուի մեր բոլոր ծխականներուն:

ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՇՈՒՐՁ ԳՈՐԾՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ.-

1. Արանց Միուլթիւն:
2. Երէց Տիկնանց Միուլթիւն:
3. Երիտասարդ Տիկնանց Միուլթիւն:
4. Դպրաց Դաս:
5. Կիրակնօրեայ Վարժարան:
6. Ծաբաթօրեայ Հայ Դպրոց:
7. Հայ եկեղեցասէր Երիտասարդաց Միուլթիւն:
8. Լին-Սէյլըմ-Փիպատիի Տիկնանց Միուլթիւն:
9. Չըլսիի Տիկնանց Միուլթիւն:
10. Արլինկթընի Դպրոցասէր Տիկնանց Միուլթիւն:

Պէտք է երախտագիտութեամբ յիշել թէ վերոյիշեալ մարմինները տար-
ւոյս ընթացքին, իւրաքանչիւրը իր տարողութեան սահմանին մէջ, բոլորանը-
ւոր աշխատած է եւ արդիւնաւոր նպաստ ընծայած է մեր եկեղեցւոյ պէտքերուն
եւ պայծառութեան: Ասոնցմէ իւրաքանչիւրը առանձին տեղեկագրով պիտի ներկա
յարնէ իր գործունէութեան արդիւնքը եւ մենք միայն կը գոհանանք մեր գը-
նահատանքի խօսքը նշելով:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

ԴԱՏԱՋԱՆԴԻՍ.- Եկեղեցւոյ տարեկան դաշտահանդէսը եւ մատաղօրհնու-
թեան արարողութիւնը, ըստ նախորդ տարիներու, տեղի ունեցաւ 22 Յունիսին
Արարատ դաշտավայրին մէջ, ընդհանուր ղեկավարութեամբ Խորհուրդիս Փոխ-
ատենապետ Պ. Ալպըրթ Թալանեանի եւ Արամ Տիրանեանի, որ ունեցաւ շատ յա-
ջող արդիւնք մը ապահովելով անցեալ տարիէն աւելի եկամուտ մը՝ 2600
տոլար:

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ.- Վեհ. Վազգէն Ա. Կաթողիկոսի կոնդակ-հրա-
հանգին համաձայն Միական Խորհուրդս մասնակցեցաւ անմահն երաժշտագէտ Կո-
միտասի ծննդեան հարիւրամեակի տօնակատարութեան, մաս կազմելով Ուոթըր-
թաունի, Լորէնսի, Հէյվըրհիլի եւ Լոպէլի եկեղեցիներու Միական Խորհուրդ
ներէն կազմուած յանձնախումբին: Հանդիսութիւնը կատարուեցաւ նոյեմբեր
7ին ձան Հէնքաքի սրահին մէջ, յայտնի արուեստագէտ Հէրի Ջարացեանի եւ
Երգչուհի Աստղիկ Տէտէեան իրենց ելոյթներով շքեղ փայլ տուին հանդէսին:

ՓՈՒՍԿԱՎՈՒԹԻՒՆ ՔԱՋԱՆԱՅԻ ԵՒ ԴՊՐԱՏ ԴԱՍԻ.- Մեր Տէր Հայրը եւ Միա-
կան Խորհուրդիս ատենապետ Պ. Արշի Խոլլիկեան ընկերակցութեամբ եկեղեց-
ւոյս դպրաց դասին՝ փոխանակութեան կարգով այցելեցին Ուստրի Ս. Փրկիչ
եկեղեցին եւ այնտեղէն ալ իրենց հովիւը՝ Հոգ. Տ. Միւռոն Ս. Վրդ. Կըր-
ճիկեան տեղւոյն դպրաց դասով եկաւ մեր եկեղեցին եւ պատարագեց: Գեղեցիկ
եւ սրտապնդիչ երեւոյթ մըն էր եղածը՝ երկու քոյր եկեղեցիներու գործակ-
ցութիւնը նշող:

ՃԱԿԵՐՈՅԹ.- Ս. Եկեղեցւոյս օծման ութերորդ տարեդարձի ճաշկերոյթը
մեծ հանդիսաւորութեամբ տեղի ունեցաւ 21 Սեպտեմբերին Սշակութային Սրա-
հին մէջ: Կուռ եւ հմայլից բանախօսութիւններ ըրին Հոգ. Տ. Աւետիք
Արեղայ Սամուրեան եւ Պ. Գրիգոր Մուսուսեան: Ի նպաստ Ս. Եկեղեցւոյս
Տընտին եկամտի բարւոյն նուիրատուութիւններ, որոնց արդիւնքը եղաւ շատ
գոհացուցիչ - 12,600.00 տոլար:

Թեամբ կը վարէ ղպրոցը, որ ունի 89 երկսեռ աշակերտ շուրջ 3000.00 տո-
լարի պիւտճէով: Երախտագիտութեամբ պէտք է յիշել թէ մեր Տէր Հայրը եւ
ազնիւ Երէցկիներ պատուակալօրէն կը դասաւանդեն այս ղպրոցի տարեց աշա-
կերտներուն:

ԶԱՆԱԶԱՆՔ ԵՒ ԾՐԱԳՐԵԱԼ ԳՈՐԾԵՐ.-

1. Եկեղեցւոյ ներքնազաւիթը գետեղուեցան երկու մետաղեայ յուշա-
տախտակներ, ուր արձանագրուած են Եկեղեցւոյն Շինութեան Մայր Յանձնա-
խումբի անդամներուն անունները, ինչպէս նաեւ եկեղեցւոյ շինութեան սա-
տարող բոլոր ենթակայ օժանդակ մարմիններու հաւաքական անուանացանկը,
Կողմութեամբ Արժ. Տէր Հօր եւ Պ. Նուպար Հինգլեանի:
2. Եկեղեցւոյ մայր դրան ճակտին փորագրուեցաւ Ս. Եկեղեցւոյս ա-
նունը-անգլերէն եւ հայերէն արձանագրութեամբ եւ ներկայանալի գեղագրու-
թեամբ: Հոգաժու հսկողութեամբ Արժ. Տէր Հօր եւ պ. Ճան Սուրսուրեանի եւ
Ծախուց Հոգատարութեամբ Տիկ. Արաքսի Մ. Խոլլիկեանի:
3. Ինչպէս յիշուեցաւ շնորհիւ Հինգլեան Նուպար եւ Արամ եղբարց
նուիրատուութեամբ գորգապատուեցան եկեղեցւոյ գաւիթը եւ ատանի անցքերը:
4. Որոշում կայացած է եւ ի մօտոյ պիտի գորգապատուի նաեւ ծխատան
ներքնամասը՝ յատկով եւ սանդխամատով:
5. Գրասենեակի համար գնուած է գրամեքենայ եւ միմիոկրած:
6. Առաջնորդ Սրբազան Հօր հրահանգով Էվընսթընի Ս. Ներսէս Աստուա-
ծաբանական վարժարանի մամուռային ժողովին ղրկած ենք կիրակնօրեայ վարժա-
րանէն երկու հոգի՝ ձիւն Կիւլխասեան եւ Մէրիըն Սուրսուրեան՝ հոգալով
իրենց երթեւեկի ծախսերը:
7. Մասնաւոր խորհրդակցութեան նիւթ ըրած եւ որոշած ըլլալով, ի մօ-
տոյ լուրջ փոփոխութիւններ եւ նորոգութիւններ տեղի պիտի ունենան եկեղեց-
ւոյս Շահէ սրահին մէջ՝ զայն ներկայանալի հաւաքատեղի մը դարձնելու հա-
մար Հայ Եկեղեցասէր Երիտասարդաց Կազմակերպութեան:
- 8 Թեմիս պատգամաւոր Պ. Նուպար Հինգլեանի գլխաւորութեամբ կազմուած
է նաեւ յանձնախումբ մը, որ յառաջիկայ տարի անալոյման պիտի ձեռնարկէ
Մշակութային Սրահի ամբողջական արդիակախոսցման՝ անհրաժեշտ յաւելումներ
եւ փոփոխութիւններ կատարելով:

ՀԱՇՈՒԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՏ ՈՒՈՒԹԻՒՆ.- Մեր ընդհանուր ելեւմուտքը որ կը
ներկայացնէ տարեկան 84,000.00 տոլարի գումար մը, առանձինն պիտի ցոյց
տրուի որ վաւերացուած է Հաշուեթնիչ Յանձնախումբի կողմէ:

Այսքանով կը փակենք մեր տեղեկագիրը սրտագին մեր շնորհակալութիւն-
ները յայտնելով մեր համայնքի բոլոր անդամոց, Ս. Եկեղեցւոյս շուրջ գոր-
ծող բոլոր մարմիններուն եւ յասկապէս մեր ժրջան եւ անձնոցի հովիւ
Արժ. Տ. Բարգէն Ա. Թհոյ. Մագսուտեանի, նուիրեալ ու բազմաշնորհ ղպրապետ
Հոգ. Տ. Օշական Վրդ. Մինասեանի, որուն բոլորանուէր ջանքերուն շնորհիւ
մեր եկեղեցին ունի ընտիր ղպրաց դաս եւ 'Երեւան'՝ անուն երգչախումբ
մը, որ իր տարեկան համերգներով մեծ պատիւ կ'աւելցնէ մեր եկեղեցիին:

Շնորհակալութիւն նույնպէս սարկաւազաց, ղպրաց դասի երկսեռ անդամոց
եւ երգեհոնարուհի Տիկ. Հելըն Սուրատեանի, Կիրակնօրեայ ղպրոցի վարիչ
Տիկ. Սառա Կիւլխասեանի եւ գործակից Տիկ. Կրէյս Գաբրիէլեանի, իրենց բո-
լորանուէր աշխատութեանց համար՝ յօգուտ եկեղեցւոյ պայծառութեան:

Ի դիմաց Միական Խորհուրդի
ԱՐԱՄ ՏԵՐ ՅԱԿՈՐԵԱՆ ԱՐՁԻ ԽՈՂԼԻԿԵԱՆ ԱԱԲԳԷՆ Ա. ԶՀՆՅ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ
Ատենաղպիր Ատենապետ Նախագահ

ԱՆԴԱՄԱԳՐԱԿԱՆ.— Պէտք է խոստովանիլ որ մեր Ծխական ժողովուրդի թուռոյն համեմատութեամբ պակաս է մեր եկեղեցւոյ անդամներու թիւը: Ներկայիս ունինք կանոնաւորաբար իրենց տարետուրքը վճարող 655 անդամներ: Հակառակ մեր տարած աշխատանքին՝ նորագիրները մեծ թիւ մը չեն կազմեր: Եթէ իւրաքանչիւր տրատու անդամ յանձնառու ըլլայ մէկ անդամ արձանագրելու յաջողութիւնը անշուշտ որ անխուսափելի պիտի ըլլայ:

ՆՈՒՒՐԱՏ ՈՒՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԿՏԱԿԱԴՐԱՄ.— Տարւոյս ընթացքին ստացած ենք հետեւեալ գումարները.—

1. Պ. Ճէյքըպ Գամպուրեան վճարած է իր հնգամեայ խոստումին վերջին վճարը 1000.00 տոլար:
 2. Հանգուցեալ Նշան Պարսամեանի թողոնէն 100.00 տոլար:
 3. Տթթ. Ակնէս Իսրայէլեանէ՝ իր բժշկական 50ամեակի տօնակատարութեան առթիւ 500.00 տոլար:
 4. Եկեղեցւոյ զաւիթը իր յարակից երկու սենեակներով եւ եկեղեցւոյ ներքնամասը իր կեղրոնով գորգապատուած է նուպար եւ Արամ Հինդլեան եղբայրներու ազնիւ նուիրատուութեամբ:
- Ասոնցմէ զատ շնորհակալութեամբ ստացաւ են եկեղեցւոյ վերաբերեալ փոքրիկ նուիրատուութիւններ, որոնց մասին յիշատակութիւններ եղած են 'Տաճար'՝ ամսաթերթիկին մէջ:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՐՏՁ—ՄՈՐԹԿԵՑՃԸ.— Այս պարտքը տարեսկիզբին հարիւր հար տոլարի գումար մը կը ներկայացնէր: Հաճոյք է արձանագրել որ այս պարտքը այժմ շուրջ 73,702.00 տոլարի իջած է եւ հետամուտ ենք աւելի պակսեցնելու:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍՐԱՀԻ ՆԵՐՁՆԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՏ ՈՒՈՒԹԻՒՆ.— Տարւոյս Սեպտեմբերի կէսէն սկսեալ մեր սրահի ներքնամասերը, առանց վնասելու մեր կիրակնօրեայ եւ շաբաթօրեայ դպրոցներուն, ժողովս յետ երկար բանակցութեան վարձու տուաւ Գէմպրիճէն Մոնթեֆորի Սքուլի վարչութեան ամսական 1050.00 տոլարի վարձով: Այս դպրոցը անձնական երկսեռ հաստատութիւն մըն է, որ առ առաւելն պիտի ունենայ 100-120 աշակերտ: Սրահներու մաքրութեան հոգը իրենք պիտի վերցնեն եւ պիտի ապահովեն շէնքին անհրաժեշտ եղող բոլոր ապահովագրութիւնները պատահական հրդեհի եւ ամէն տեսակի վտանգներու դէմ: Մեր կողմէ պիտի հայթայթուի տաքութիւն, լոյս եւ ջուր միայն: Ծխական Խորհուրդիս անդամներէն Պ. Փոթըր Կիւլխասեան, որ այս առթիւ օգտակար աշխատանքներ տարաւ, կապ պիտի պահէ իբրեւ լիազօր մեր եւ յիշեալ դպրոցի վարչութեան միջեւ:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԿԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ.— Այս կազմակերպութիւնը, որ կը համրէ շուրջ 30-35 երկսեռ անդամներու թիւ մը, ներկայ տարեշրջանին հիմնովին վերակազմութեան ենթարկուեցաւ՝ բաւական ժամանակ եւ ջանքեր խլելով Ծխական Խորհուրդէն: Ուրախ ենք յայտնելու որ շնորհիւ տարուած ջանքերուն, այս Միութիւնը այժմ ամէն վստահութեան կը ներշնչէ մեզի, որ առաջնորդուելով կանոնադրային տրամադրութենէն եւ Ծխական Խորհուրդիս խոհական ցուցմունքներէն, պիտի դառնայ մեր եկեղեցւոյ վաղուան աշխատաւոր դասը՝ ամէն կերպով նպաստատու եկեղեցւոյ պայծառութեան:

ՇԱԲԱԹՈՒԹԵԱՅ ՀԱՅ ԴՊՐՈՑ.— Ինչպէս գիտէք տարիներէ ի վեր հաստատուած չայ Դպրոցին մասին է մեր խօսքը, որուն մասին վախճանեցանք առանձինն անցեալ տարուայ, այն շարժառիթով որ այս տարի մասնաւոր ջանքեր տարուեցան վերցնելու համար այն վարչային դժուարութիւնները, որոնք լուրջ արգելք դարձած էին դպրոցին կանոնաւոր մատակարարման եւ շարունակութեան: Շնորհիւ Տէր Զօր ձեռնտու առաջնորդութեան, Ծխական Խորհուրդիս ջանքերուն, վարչական դժուարութիւնները հարթուեցան եւ դպրոցը այժմ կը բոլորէ բարեյաջող տարի մը: Կարգութեան աստիճանաբար Սիբանոյշ Մարթին, Դպրոցի վարիչ Ռուբէն Թիրէճեան շուրջ տասը ռեսուրսի պաշտօնեաներով կոտորեալ յաջողու-

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH

"CHURCH BUILDING FUND"

STATEMENT OF RECEIPTS & DISBURSEMENTS for the

YEAR ENDED DECEMBER 31, 1969

Cash in Bank - January 1, 1969 1,368.10

Receipts - Year 1969

Pledge Collections and Donations	9,645.00	
Holy Trinity Parish Council	4,500.00	
Senior Women's Auxiliary	4,000.00	
Young Women's Auxiliary	12,000.00	
Chelsea Women's Auxiliary	1,000.00	
Lynn, Salem, Peabody Women's Auxiliary	300.00	
Holy Trinity Armenian School	100.00	
Armenian Women's Educational Society	100.00	
Holy Trinity Choir	1,000.00	<u>32,545.00</u>

Total Cash Available \$33,913.10

Less - Disbursements - Year 1969

Mortgage principal payments	25,612.72
Mortgage interest paid	4,771.28
Church equipment	<u>2,834.30</u>

Total Disbursements 33,218.30

Cash in bank - December 31, 1969 \$ 694.80

MORTGAGE BALANCE - December 31, 1969 \$73,702.18

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH of GREATER BOSTON

Yearly Statement of the Parish Council, Jan. 1, 1969 -- Dec. 31, 1969

INCOME	1967	1968	1969	1969
Cash in Bank	\$ 1,133.12	\$ 5,155.07	\$	\$ 9,957.98
Receipts for:				
Membership Dues.....	8,685.00	8,620.00	8,830.00	
Plate Offerings.....	14,165.42	16,673.43	12,166.82	
Requiem Services.....	8,628.00	8,943.00	8,168.00	
Baptisms.....	640.00	638.60	650.00	
Weddings.....	965.00	910.00	1,205.16	
Funerals.....	1,990.00	2,405.00	2,673.00	
In Lieu of Flowers.....	17,772.75	24,517.50	17,352.50	
Hall Gifts.....	3,740.00	5,420.00	4,420.00	
Montessori School.....			4,200.00	
Youghakin.....	2,484.00	2,766.00	3,199.50	
Dajar Subscriptions.....	544.00	651.00	501.50	
General Contributions.....	1,147.50	370.00	448.00	
Church Affairs.....	5,340.55	6,831.95	5,769.83	
Books & Calendars	375.50	443.00	78.00	
Wills.....	500.00	-----	100.00	
Special Gifts.....	-----	279.00	1,994.10	
Sunday School.....	-----	-----	1,170.82	
Miscellaneous.....	455.10	2,478.45	1,386.07	
TOTAL RECEIPTS	<u>\$68,565.94</u>	<u>\$87,101.40</u>		<u>\$74,313.30</u>
TOTAL RECEIPTS for 1969				\$84,271.28
Less operating Disbursements.....			\$75,232.94	
Transfer to Building Fund.....			4,500.00	
Transfer to Renovating Fund.....			2,800.00	
TOTAL DISBURSEMENTS				<u>\$82,532.94</u>
CASH IN BANK at END of				
FISCAL YEAR.....	<u>\$ 5,155.07</u>	<u>\$ 9,957.98</u>		<u>\$ 1,738.34</u>

We have examined the books of account and related records of the Holy Trinity Armenian Apostolic Church of Greater Boston for the year ended December 31, 1969. We find the Statement of Receipts and Disbursements to be in agreement with the recorded transactions in the book of account for the year then ended.

Respectfully submitted,
Auditing Committee:

Armine D. Hagopian

Peter S. Talanian

Arthur Ansbikian

January 20, 1970

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH of GREATER BOSTON

Yearly Statement of the Parish Council, Jan. 1, 1969 - Dec. 31, 1969

DISBURSEMENTS	1967	1968	1969
Payroll.....	\$14,882.22	\$15,715.99	\$14,931.23
Misc. Services Payroll.....	4,210.00	5,365.00	7,210.00
Donations.....	275.00	385.00	631.50
Clergy Relief Insurance.....	893.08	512.28	1,304.66
Payroll Tax.....	1,835.61	2,367.60	2,738.62
Diocese Dues.....	7,293.00	3,537.60	9,780.00
Building Maintenance.....	2,304.29	4,580.24	4,865.90
Water.....	61.40	68.60	109.80
Gas, Electric & Candles.....	3,236.26	3,453.76	2,861.91
Fuel Oil.....	4,620.68	3,413.67	4,786.42
Real Estate Tax.....	1,482.66	1,008.40	1,099.00
Insurance.....	3,431.46	2,490.20	2,626.89
Furniture & Fixtures.....	1,779.25	1,601.43	840.00
Affairs (Inc. Picnic Expense).....	3,393.17	3,048.35	1,779.79
Car Account.....	656.97	759.77	575.67
Visiting Clergy.....	491.80	259.50	100.00
In Lieu of Flowers.....	3,147.25	10,052.60	3,154.66
Postage.....	699.00	756.00	1,023.00
Telephone.....	717.31	1,035.40	874.28
Books, Calendars.....	298.30	546.97	1,643.09
Maintenance Supplies.....	678.74	1,762.25	2,721.31
Newsletters & Publications.....	2,451.39	4,060.85	3,785.22
Stationery.....	867.48	1,267.75	908.08
Sunday School.....	579.27	760.28	923.57
Travel Expense.....	540.38	305.25	2,260.18
Miscellaneous.....	941.90	2,723.87	1,561.77
Trans. to Cathedral Fund.....		2,213.71	
Flowers.....	143.00	91.10	136.40
Trans. to Renovating Fund.....			2,800.00
Trans. to Building Fund.....	1,000.00	3,000.00	4,500.00
	<u>\$62,910.87</u>	<u>\$77,143.42</u>	<u>\$82,532.94</u>
Trans. to Sinking Fund (Matenig Garabedian Will.)	<u>500.00</u>	<u>5,000.00</u>	
TOTAL DISBURSEMENTS	<u>\$63,410.87</u>	<u>\$82,143.42</u>	<u>\$82,532.94</u>

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH

REPORT OF SINKING FUND ACCOUNT

Sulfolk Franklin Saving Bank

BALANCE IN BANK - December 31, 1968 8,845.46

Bank Interest from January 1, 1969 to December 31, 1969 702.15

Other Income - Stock Dividends

Avco Corp.	19.20	
American Telephone & Telegram	882.00	
Ford Motor Co.	28.80	
General Electric Co.	99.45	
General Motors Corp.	522.00	
Grayhound Corp.	21.00	
K. D. I. Corp.	10.50	
Mobil Oil Corp.	27.00	
Penn. Central Co.	39.60	
Radio Corp. of America	93.00	
Standard Oil Company of New Jersey	72.00	
Standard Oil Co. of Indiana	41.40	
The United Corp.	12.60	
Uniroyal Inc.	<u>204.00</u>	<u>2,072.55</u>

BALANCE IN BANK - December 31, 1969 \$11,620.16

STOCK FUND - Bequests from estate of Alice Beshgeturian (Darling)

<u>Shares</u>	<u>Common Stock</u>	<u>Market Value</u>
6	Avco Corp. (pf.)	315.00
360	American Tel. & Tel.	17,505.00
12	Ford Motor Co.	493.50
51	General Electric (Certificate Not Received)	3,952.50
90	General Motors Corp.	6,221.25
21	Grayhound Corp.	349.13
100	K. D. I. (Certificate not received)	2,225.00
12	Mobil Oil Corp.	552.00
66	Penn Central Co.	1,864.50
93	Radio Corp. of America	7,463.25
15	Standard Oil Co. of New Jersey	926.25
18	Standard Oil Co. of Indiana	864.00
18	The United Corp.	198.00
120	Uniroyal Inc.	
120	" split -2-1	
<u>240</u>	"	<u>4,770.00</u>
		\$47,699.38

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH CHOIR
ANNUAL REPORT 1968-69

Executive Committee: President	Rev. Father Papken Maksoudian
Director	Very Rev. Father Oshagan Minassian
Chairman	Norair Odabashian
Vice-Chairman	Roupen Kiredjian
Secretary	Eva Nishanian
Treasurer	Zabel Odabashian
Publicity	Priscilla DerAnanian
Advisors	Grace Bozian and Betty Roopenian

Number of Meetings: Membership 4 Executive 7

Affairs or Events:

Participated in Boston Day Pilgrimage to New York Cathedral
Sponsored concert March 30th by Yerevan Choral Group
Sponsored Halloween Social for Yerevan Choral Group
Choir Communion Brunch
Christmas Dinner and Social
Mother's Day Dinner and Social
Sponsored steak dinner for Yerevan Choral Group
Performance for guests at Home for the Armenian Aged
Exchange Service and Fellowship Luncheon with the Worcester Church

Affiliated Groups: Yerevan Choral Group

FINANCIAL REPORT

INCOME: Balance in bank as of June, 1968 \$2,181.54

<u>Income from each affair:</u>			
Communion Brunch	44.00		
Christmas Party	139.88		
Concert	4297.66	4,481.46	
<u>Miscellaneous:</u>			
Church Offerings	242.19		
Donations	185.00		
Interest	48.21		
Miscellaneous	2.00	477.40	4,958.86
TOTAL CASH AVAILABLE			\$7,140.40

EXPENDITURES: Transferred to Building Fund \$1,000.00

<u>Expenses for each function:</u>			
Cathedral Pilgrimage	140.00		
Refreshments-Choral Group	225.05		
Parties-Social-Meetings	536.72		
Donations-Gifts	117.98		
Concert	3481.68	4,401.83	
<u>Miscellaneous:</u>			
Tablecloths	39.44		
Miscellaneous	2.25		
Postcards	151.50		
Choir Association Dues	133.50	326.69	5,728.12

BALANCE AT END OF FISCAL YEAR June, 1969 \$1,412.28

HOLY TRINITY SENIOR WOMEN'S AUXILIARY
ANNUAL REPORT 1968-69

Executive Committee: President	Rev. Father Papken Maksoudian
Chairman	Dirouhi Highgas
Vice-Chairman	Ann Alexander
Rec. Secretary	Varsenig Minassian
Cor. Secretary	Agnes Najarian
Treasurer	Araxie H. Kolligian
Ass't Treas.	Vartouhie Babikian
Kitchen Chmn.	Rose Saraf
Advisors	Pyloon Kolligian, Verjin Hatabian Rose Kuzirian, Nurig Zirakian

Number of Members: 190
Number of Meetings: Membership 9 - With Lunch Executive 10

Affairs or Events:

Kufta Party - January 30, 1969
Preparation of Lunch for Annual Meeting - January 26
Easter Sunday - Income from Buttons
Annual Picnic - Assisting in Kitchen
Chelsea Women's 40th Anniv. Dinner - Prepared Dinner
Church 8th Anniversary Banquet - September 21st. Prepared Dinner
Ladies Auxilary Annual Memorial Dinner - October 26
Booth at the Young Women's Bazaar

FINANCIAL REPORT: June 1968 - May 1969

INCOME:	Balance in bank - June 1968	\$2,775.38
	Dues Received	402.00
	Income from monthly meetings	553.67
		955.67
	<u>Income from each affair:</u>	
	Annual Bldg. Fund	1,245.00
	Oct. Memorial Banquet	447.85
	December Banquet	988.25
	Bazaar	897.20
	Election Meeting	194.15
	Koofta Party	363.70
	Checking account	207.10
	Interest in Bank	68.24
	Cash on hand	9.53
		\$284.87
	<u>TOTAL CASH AVAILABLE</u>	\$9,604.71

		284.87
	EXPENDITURES: Transferred to Building Fund	\$4,000.00
	<u>Expenses for each function:</u>	
	Annual Bldg. Fund	658.81
	Memorial Banquet	135.98
	December Banquet	617.30
	Bazaar	139.01
	Koofta Party	89.46
	Election Meeting	85.03
	Luncheon Expense	222.01
	Armenian School Choral Group	591.58
	Gifts for Diocese; Pots & Pans	.
	Ads, tickets, stamps	281.92
	In lieu of flowers	80.00
	Flowers f or sick members	73.50
	Misc.	70.00
	Easter Buttons	69.60
	<u>TOTAL EXPENDITURES</u>	3,114.20
	<u>BALANCE AT END OF FISCAL YEAR</u>	\$7,114.20
		\$9,889.58
		7,114.20
		\$2,775.38

HOLY TRINITY YOUNG WOMEN'S AUXILIARY
ANNUAL REPORT 1968-69

Executive Committee: President Rev. Father Papken Maksoudian
Chairman Mary Hintlian
Vice-Chairman Carol Zeytoonjian
Treasurer Nancy Kasarjian
Rec. Secretary Queenie Antonucci
Cor. " Helene Dorian
Ass't Treas. Rose Samourian
Advisors Rose Kolligian, Nellie Bogosian

Number of Members: 116
Number of Meetings: Membership 9 Executive 8

Affairs or Events:

Rummage Sale - October (sale of old clothing and house items)
Trinity Cotillion - November (Presentation of debutantes)
Annual Bazaar - December (Dinner and sale of bazaar items)
Children's Communion Breakfast - April
Rummage Sale - April
Mothers' Day Dinner - May (Dinner and program in honor of mothers)

Affiliated Groups: Trinity League

Executive Committee: President Rev. Father Papken Maksoudian
Chairman Linda Boyajian
Secretary Karan Nanian
Treasurer Carol Taghakjian Haroutunian
Advisor Nancy Hintlian Lowry
Young Women's Auxiliary Advisors
Mrs. Ara Asadorian, Mrs. Daniel Dorian

Number of Members: 27

Affairs or Events:

Annual Fall Fashion Show
Luncheon in March (To welcome the new Debs to the Trinity League)
Visitation to the Armenian Nursing Home at Easter (Gave fruit baskets and there was a program of Armenian music and dance.)
Donation of \$100.00 to the Trinity Cotillion

FINANCIAL REPORT: 1968 - 1969

INCOME: Balance in bank: Savings-	\$4,292.68	Checking Acct.	\$1,466.81
Dues Received (Approximately)	\$232.00		
Income from each affair:			
Fall Rummage Sale	343.31		
Cotillion 1968	11,812.50		
Bazaar 1968	7,262.12		
Spring Rummage Sale	325.50		
Total Receipts			\$19,743.43
TOTAL CASH AVAILABLE		\$5,759.49	
EXPENDITURES: Transferred to Parish Council & Building Fund			\$9,000.00
Expenses for each function:			
Fall Rummage Sale	31.20		
Cotillion	9,076.03		
Bazaar	2,942.32		
Spring Rummage Sale	56.64		
Total Expenditures			\$11,106.19
BALANCE AT END OF FISCAL YEAR		\$5,759.49	

HOLY TRINITY ARMENIAN CHURCH

CHELSEA WOMEN'S AUXILIARY

ANNUAL REPORT 1968-69

Executive Committee:	President	Rev. Father Papken Maksoudian
	Chairman	Mrs. Azniv Matevosian
	Vice-Chairman	Mrs. Yeranouhi Garabedian
	Secretary	Mrs. Anna Kinosian
	Treasurer	Mrs. Rose Haroutunian
	Advisors	Mrs. Varter Krikorian
		Mrs. Margaret Kalchian
		Mrs. Elmast Boyajian

Number of Members: 32

Number of Meetings: 7

FINANCIAL REPORT

INCOME: Balance in bank \$1473.14

Dues Received: \$52.00
Income from meetings: \$137.00
Donations received: \$248.00

EXPENDITURES: Transferred to Building Fund \$300.00

Expenses:

Special Dinner	\$ 22.00
Madagh Blessing	10.00
Gift to the Armenian School	10.00
Advertising in Baikar for 40th Anniversary	48.00
Tickets (Printing)	6.75
Cards	7.00
Total	\$108.25

HOLY TRINITY ARMENIAN SCHOOL ASSOCIATION
ANNUAL REPORT 1968-1969

Executive Committee:	President	Rev. Fr. Papken Maksoudian
	Chairman	Sally Martin
	Vice-Chairman	Stephen Demirjian
	Treasurer	Richard Mouradjian
	Rec. Secretary	Alice Roat
	Cor. Secretary	Anne Haroutunian
	Advisors	Julie Stephanian, Araxie Nahigian Phyllis Martins, Arthur Panosian

No. of Members: 64 Teachers: 10 Pupils: 78 Classes: 8
School Hours: 9:30 - 12:00
Number of Meetings: Membership; 8 Executive; 10

Affairs or Events:

Oct. 16, 68 - Dinner-Meeting. Introduction of new School Committee & Teachers
Nov. 20, " - Dinner & Lecture, Prof. Robert Thomson, Harvard Univ. Armenian Hist.
Dec. 7, " - Christmas Bazaar-Pastry Booth by Members
Curriculum & School Information by Teachers
Dec. 14, " - Christmas Party for Children-lunch, games, entertainment & Santa
Dec. 18, " - Christmas Party-Buffer for Members
Jan. 12, 69 - Annual Christmas Fund-Raising Banquet & Program
Feb. 15, 69 - Children's Valentine Party. Lunch and games
Mar. 12, " - Dinner-Meeting. Guest Speaker, Mrs. Astrid Kachadorian, School Supt.
on "Operation Armenian School."
Mar. 23, " - Social Night-Out for members at Club Monticello
Apr. 26, " - Bake Sale at Stop & Shop-Food donated and sold by members
Apr. 30, " - Panel discussion by invited representatives of all local Armenian
Schools. "Evaluation of Current Methods, Goals, Future Challenges
of Saturday Armenian School."
May 11, " - Annual School Hantess and Graduation Exercises and Program by
Students. Shish Kebab dinner
May 21, " - Dinner-Meeting for Members
Jun. 11, " - Special last Meeting to hear final School reports from School Supt.
And Treasurer.

FINANCIAL REPORT - Ending June 30, 1969

<u>Income:</u>	Balance in bank July 1, 1968		\$2,715.04
	Dues Received	\$78.00	
	<u>Income from Each Affair:</u>		
	Christmas Bazaar	205.25	
	Fund-Raising Banquet	2328.45	
	April Bake Sale	113.75	
	May Closing Hantess	1036.90	3,684.35
	<u>Miscellaneous:</u>		
	School supplies & books	132.15	
	Misc.	13.00	145.15
	Total Receipts		<u>3,907.50</u>
	<u>TOTAL CASH AVAILABLE</u>		\$6,622.54

(Continued)

ARMENIAN SCHOOL FINANCIAL REPORT (continued)

EXPENDITURES:

Expenses for each main function:

Christmas Banquet	224.06		
May Closing Hantess	<u>468.53</u>	692.59	
Misc. (See Below)		<u>3,019.58</u>	3,712.17

Total Expenditures			3,910.37
	Plus Bank Interest		<u>115.14</u>
	Total Balance		<u>3,025.51</u>

Cash on Hand - July 1, 1968			\$2,715.04
Belmont Savings Bank - July 1, 1968	2,647.46		
Harvard Trust Co. (Checking Account)	1.01		
Petty Cash	47.57		
Social Fund	19.00		
	<u>\$2,715.04</u>		

Receipts - July 1, 1968 - June 1, 1969			<u>3,214.91</u>
			<u>\$5,929.95</u>

Less Expenditures - July 1, 1968 - June 1, 1969			<u>3,019.58</u>
			<u>\$2,910.37</u>

Plus Interest on Belmont Savings Account			<u>115.14</u>
Balance on Hand - June 1, 1969			<u>\$3,025.51</u>

Belmont Savings Bank - June 1, 1969	2,954.21		
Harvard Trust Co. (Checking Account)	36.23		
Petty Cash	16.07		
Social Fund	<u>19.00</u>		<u>\$3,025.51</u>

STATEMENT OF RECEIPTS & DISBURSEMENTS FOR THE PERIOD OF JULY 1, 68 - JUNE 30, 69

<u>Receipts</u> - Membership Dues	78.00		
Text Books (Sold to Pupils)	132.15		
Christmas Bazaar Booth	205.25		
Donation, in lieu of teaching/H. Malbandian	10.00		
Christmas Dinner-Hantess	2,104.39		
April Bake Sale	113.75		
May Closing Dinner-Hantess	568.37		
Misc. Inc. (Donation Shaghalian-Nahigian)	<u>3.00</u>		
	<u>\$3,214.91</u>	Total Receipts	

Disbursements

Teachers' Salaries	\$2,342.75		
In lieu of flowers for Members	10.00		
Annual Gift to Church	100.00		
Postage	80.69		
Gifts or Flowers to hospitalized members	11.50		
Birthday Cards & Postage	11.36		
Advertising (Mirror-Spectator)	16.00		
Children's Parties	24.50		
Bank Charges for Checking Acct.	9.53		
Text Books	153.70		
Xerox Expense & Misc. Supplies	140.63		
Kindergarten Expenses	30.06		
Printing & Stationery	36.00		
Addressograph Plates	10.35		
Gifts for Perfect Attendance	10.60		
Misc. Gifts	25.75		
Children's Costumes Expenses	<u>5.96</u>		
	<u>\$3,019.58</u>	Total Disbursements	

HOLY TRINITY ARMENIAN CHURCH SUNDAY SCHOOL

ANNUAL REPORT 1968-69

Executive Committee: President	Rev. Father Papken Maksoudian
Superintendent	Mrs. Sarah A. Goolkasian
Asst. Supt.	Mrs. Grace Kaprelian
Secretary	Anna Yeshilian
Treasurer	Edward Talanian
Assembly Director	Armenag David

Number of Teachers: 33 Pupils 251 Classes 15
School Hours: 10:15 a.m. - 12 NOON

Number of Meetings: Teachers 9 Executive 5

Affairs or Events:

Nov. 1, 1968 Halloween Party Sponsored by Trinity Men's Union

Nov. 8, " Parents Supper - Prepared by Teachers and Parents

Nov. 16, " N.E.Regional Conference at S/S Sahag/Mesrob-Prov. R.I.

Dec. 7, " Christmas Bazaar-Donations from children, friends and parents.

Dec. 22, " Santa Claus visits Class Rooms with boxes of candy donated by Young Women's Auxiliary

Jan. 4, 1969 Christmas Communion & Breakfast/Prepared by Young Women's Auxiliary

Apr. 5, " Easter Communion & Breakfast

May 18, " Family Worship & Communion

June 1, " Sunday School Family Picnic Sponsored by Trinity Men's Union

June 8, " Children's Day Program...and GRADUATION EXERCISES

FINANCIAL REPORT

Income: Balance in bank - June 15, 1969 \$2,822.00

HOLY TRINITY ARMENIAN CHURCH

ARMENIAN WOMEN'S EDUCATIONAL SOCIETY OF ARLINGTON

ANNUAL REPORT 1968-69

Executive Committee:	Chairman	Mrs. Arax Najarian
	Vice-Chairman	Mrs. Ann Alexander
	Secretary	Mrs. Kayane Jelal
	Treasurer	Mrs. Alice Haroutunian
	Advisors	Mrs. Pyloon Kolligian
		Mrs. Alice Conragan
		Mrs. Rose Saraf
		Mrs. Nevart Simonian
		Mrs. Rose Zartarian

Number of Meetings: Membership 9 Executive 9

Affairs or Events:

In the month of November a supper
A luncheon in the Spring

Affiliated Groups: Holy Trinity Armenian School, Cambridge

